

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հ. Թովմասյանի դիտողությունների և առաջարկությունների մասին

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրայր Թովմասյան	5-րդ հոդվածի 2-րդ մաս	<p>Օրենքի նախագծի 1-ին հոդվածի համաձայն մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.</p> <p>«Ազգային ժողովը կարող է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով չեղյալ հայտարարել ռազմական դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը կամ վերացնել ռազմական դրությունը:»:</p>	<p>Ընդունվել է մասամբ, օրենքի նախագծի 1-ին մասի 2-րդ կետում «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը կարող է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված կարգով վերացնել ռազմական դրությունը:» նախադասությունը փոխարինվել է «Ազգային ժողովը կարող է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով վերացնել ռազմական դրությունը:» նախադասությամբ, քանի որ միջոցառումների իրականացումը չեղյալ հայտարարելու վերաբերյալ դրույթները նախատեսված են օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ կետում:</p>	<p>Ընդունվել է:</p>

2.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրայր Թովմասյան</p>	<p>3-րդ հոդված:</p>	<p>Հոդվածը հանել, քանի որ այն կրկնում է ՀՀ Սահմանադրությամբ սահմանված համապատասխան դրույթները</p>	<p>Ընդունվել է մասամբ, 3-րդ հոդվածը չի հանվել, այլ դրանով ուժը կորցրած է ճանաչվել Օրենքի 7-րդ հոդվածը, քանի որ նշված հոդվածում սահմանված դրույթները չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրությանը:</p>	<p>Ընդունվել է:</p>
3.	<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրայր Թովմասյան</p>	<p>8-րդ հոդվածի 2-րդ մաս</p>	<p>Օրենքի նախագծի 4-րդ հոդվածի համաձայն մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «Ազգային ժողովը կարող է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով վերացնել ռազմական դրությունը կամ չեղյալ հայտարարել ռազմական դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը:»:</p>	<p>Ընդունվել է մասամբ, քանի որ այն կրկնում է Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկվող նախադասությունը. արդյունքում՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը կարող է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված կարգով չեղյալ հայտարարել ռազմական դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը:» նախադասությունը փոխարինվել է «Ազգային ժողովը կարող է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով չեղյալ հայտարարել ռազմական դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրա-</p>	<p>Ընդունվել է:</p>

				կանացումը:» նախադասությամբ:	
4.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրայր Թովմասյան	8-րդ հոդված:	<p>Օրենքի նախագծի 4-րդ հոդվածի համաձայն հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ մասով.</p> <p>«3. Ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, բացառությամբ Սահմանադրության 23-26-րդ, 28-30-րդ, 35-37-րդ հոդվածներում, 38-րդ հոդվածի 1-ին մասում, 41-րդ հոդվածի 1-ին մասում, 47-րդ հոդվածի 1-ին մասում, 5-րդ մասի 1-ին նախադասությունում և 8-րդ մասում, 52-րդ, 55-րդ հոդվածի 2-րդ մասում, 56-րդ, 61-րդ, 63-72-րդ հոդվածներում նշվածների, կարող են սույն օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ ռազմական դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում:»:</p>	<p>Ընդունվել է մասամբ, քանի որ առաջարկվող դրույթները գրեթե ամբողջությամբ կրկնում են ՀՀ Սահմանադրության 76-րդ հոդվածը, ինչպես նաև հաշվի առնելով, որ Օրենքի 14-րդ հոդվածում սահմանված են համապատասխան դրույթներ, օրենքի նախագիծը լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր 10-րդ հոդվածով.</p> <p>«ՀՈԴՎԱԾ 10. Օրենքի 14-րդ հոդվածում «որոնք» բառից հետո լրացնել «ապահովում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 76-րդ հոդվածի պահանջները և» բառերը:»:</p>	Ընդունվել է:
5	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հրայր Թովմասյան	17-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերություն:	<p>Օրենքի նախագծի 10-րդ հոդվածի համաձայն պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«Ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովմանն ուղղված բոլոր միջոցառումների իրականացումն Ազգային ժողովի կողմից չեղյալ հայտարարվելու դեպքում ռազմական դրությունը դադարում է, իսկ առանձին միջոցառ-</p>	<p>Ընդունվել է մասամբ, օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ կետը շարադրվել է հետևյալ բովանդակությամբ.</p> <p>«Ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովմանն ուղղված որևէ առանձին միջոցառման իրականա-</p>	Ընդունվել է:

			<p>ման իրականացումը չեղյալ հայտարարվելու դեպքում՝ դադարում է այդ միջոցառման հետագա իրականացումը:»:</p>	<p>ցումն Ազգային ժողովի կողմից չեղյալ հայտարարվելու դեպքում դադարում է այդ միջոցառման հետագա իրականացումը, իսկ Ազգային ժողովի կողմից ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովմանն ուղղված բոլոր միջոցառումների իրականացումը չեղյալ հայտարարվելու դեպքում ռազմական դրությունը դադարում է, որի մասին բնակչությունն անհապաղ իրազեկվում է մամուլով և զանգվածային լրատվության մյուս միջոցներով:»:</p>	
--	--	--	--	--	--